Հ. Խ. ԿԱՐՃԻԿՅԱՆ

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը ռուսական միապետության լայնածավալ տերիտորիայի վրա բնակվող ժողովուրդների առաջ բացեց անսահման հնարավորություններ բազմակողմանի զարգացման համար, ստեղծեց արտադրողական ուժերի անշեղ աճի և ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի վերելքի բարձր տեմպերի համար անհրաժեշտ պայմաններ։ Առավել մեծ հնարավորություններ բացվեցին փոքր ժողովուրդների առաջ, այդ թվում, շատ տառապանքներ կրած, հայ ժողովրդի առաջ։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Սովետական Միության ժողովուրդները ընթացան տնտեսական շինարարության նոր՝ սոցիալիստական ուղիով։ Ըստ որում ամեն մի տնտեսական շրջան, ամեն մի հանրապետություն ուներ զարգացման իր առանձնահատկությունները։ Հայաստանի ժողովրդական տնտեսության ճյուղերի զարգացմանը բնորոշ էր այնպիսի շրջանի առանձնահատկություն, որը համեմատաբար կարճ ժամանակաշրջանում ցարական Ռուսաստանի հետամնաց ծայրամասից դարձավ առաջավոր, զարգացած արդյունաբերություն և մեքենայացման ենթարկված սոցիալիստական գյուղատնտեսություն ունեցող հանրապետություն։

Հայաստանը 1913 թ. ագրարային երկիր էր։ Գյուղատնտեսական արտադրանքի տեսակարար կշիռը ամբողջ համախառն արտադրանքի մեջ կազմում էր 76,1 տոկոս, իսկ արդյունաբերությունը՝ 23,9 տոկոս[1]։ Բնական է, որ, ըստ էության, նոր արդյունաբերության ստեղծումը և հետագա ինդուստրացումը պետք է առաջացնեին արդյունաբերական արտադրանքի աճի շատ բարձր տեմպեր։ Բավական է նշել, որ Հայաստանում 1913 թ. մինչև 1965 թ. արդյունաբերական արտադրանքը ավելացել է 106 անգամ, իսկ գյուղատնտեսության՝ միայն 4,2 անգամ[2]։

Ի տարբերություն արդյունաբերության, գյուղատնտեսության զարգացման հնարավորությունները Հայաստանում սահմանափակված էին նրա տերիտորիայի և հողատարածությունների ոչ մեծ չափերով։ Պետք է նկատի ունենալ նաև այն, որ նախահեղափոխական շրջանում, չնայած մանր գյուղացիական, էքստենսիվ վարվող գյուղատնտեսությանը, երբ համարյա ամենուրեք օգտագործվում էին գյուղատնտեսական աշխատանքի միայն պարզ գործիքներ, Հայաստանում նշանակալի չափերով արդեն մշակվում էր հացահատիկ, ինչպես նաև կարտոֆիլ, բանջարեղեն, բամբակ, խաղող և այլ կուլտուրաներ, զբաղվում էին խոշոր և մանր եղջերավոր անասունների բուծմամբ։

---

[1] «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.)», 1940, стр. 10.

[2] «Народное хозяйство Армянской ССР в 1963 и 1965 гг.», Статистический ежегодник, стр. 30 и 31.

Ռուսաստանում, կապիտալիզմի զարգացման շրջանում, փոփոխությունները հողագործության արտադրանքում տեղի էին ունենում ոչ միայն միապետության կենտրոնական մարզերում, այլև նրա ծայրամասերում։ Վ. Ի. Լենինը իր «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատության մեջ ցույց տվեց, թե ինչպես առևտրական հողագործության զարգացման շնորհիվ բարձրացավ գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականությունը, ավելացավ գյուղատնտեսական մթերքների արտադրանքը։

Հայաստանում առևտրական հողագործության զարգացումը նպաստեց բամբակի և խաղողի արտադրանքի ավելացմանը՝ Արարատյան հարթավայրում և անասնապահական մթերքների ավելացմանը՝ հյուսիսային շրջաններում։

Առաջին համաշխարհային և քաղաքացիական պատերազմի ծանր տարիներին Հայաստանում տեղի ունեցավ գյուղատնտեսական արտադրանքի մեծ անկում։ 1913 թ. մինչև 1919 թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքը կրճատվեց ավելի քան հինգ անգամ։ Չորս անգամ պակասեցին ցանքատարածությունները, փչացավ խաղողի այգիների գրեթե կեսը, պտղատու այգիների երկու երրորդը։ Երկուսու կեսից-երեք անգամ կրճատվեց անասունների գլխաքանակը։ Պահանջվեցին մի շարք տարիներ, որպեսզի գյուղատնտեսությունը վերականգնվի և հասնի 1913 թ. մակարդակին։

Մեծ փոփոխություններ տեղի ունեցան գյուղատնտեսության մեջ 1928 թ. հետո։ Կիրառելով գյուղատնտեսության սոցիալիստական զարգացման կոոպերացիայի լենինյան ծրագիրը, Հայկական ՍՍՀ-ում մոտ 150 հազար մանր գյուղացիական տնտեսությունների փոխարեն կազմակերպվեցին հազարից ավելի խոշոր կոլտնտեսություններ։ Ներկայումս տնտեսությունների խոշորացման, ինչպես նաև նրանցից շատերի պետական տնտեսությունների՝ սովխոզների վերածելու հետևանքով, կոլտնտեսությունների թիվը կրճատվեց և առ 1-ը հունվարի 1966 թ. կազմեց 536։

Գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում մեծ դեր խաղացին սովխոզները, որոնց կառուցումը նախաձեռնվել էր դեռ 1921 թ.։ 1928 թ. դրանց թիվը կազմում էր 15, 1960 թ.՝ 83, իսկ 1965 թ. հասավ 203-ի։

Խոշոր սոցիալիստական տնտեսությունների՝ սովխոզների և կոլտնտեսությունների կազմակերպումը լայն հնարավորություն ստեղծեց գյուղատնտեսության մեքենայացման համար։ Նոր մեքենայական տեխնիկան ռացիոնալ, բարձր արտադրողականությամբ օգտագործելու համար հանրապետությունում 1930 թ. ստեղծվեցին առաջին պետական մեքենա-տրակտորային կայանները, որոնք ժամանակին (մինչև 1958 թ.) դրական դեր խաղացին կոլտնտեսային արտադրության կազմակերպման և զարգացման գործում։

Ներկայումս Հայաստանի գյուղատնտեսության էներգետիկ կարողությունները գերազանցում են 1200 հազար ձիու ուժից և գրեթե հինգ անգամ ավելի են քան 1940 թ., ըստ որում, կենդանի քաշող ուժը, որը մինչխորհրդային շրջանում միակ էներգետիկ ռեսուրսն էր գյուղատնտեսության մեջ, 1965 թ. կազմում էր հանրապետության գյուղատնտեսության էներգետիկ կարողությունների միայն մեկ տոկոսը։

1965 թ. Հայաստանի դաշտերում աշխատում էին ավելի քան 13,0 հազար տրակտոր (15 ուժանոցի վերածած), մոտ 1600 կոմբայն և շատ ուրիշ գյուղատնտեսական տեխնիկա և տրանսպորտային միջոցներ։

Մեքենայացման հետ միասին, գյուղատնտեսության զարգացման կարևոր պայմանն է նրա հետևողական ինտենսիվացումը՝ գյուղատնտեսության քիմիացման, էլեկտրիֆիկացման և իռիգացիայի միջոցով։ Մեր հանրապետության համար առանձնապես մեծ է վերջինի դերը։ Հայաստանի չորային ու հոդերի գերազանցապես հարավային էքսպոզիցիայի պայմաններում, ոռոգումը գյուղատնտեսության հաջող զարգացման, նրա ինտենսիֆիկացման գլխավոր նախադրյալն է։

Մինչ առաջին համաշխարհային պատերազմը Հայաստանում կար ընդամենը 97,0 հազ. հեկտար ջրովի հող։ Ոռոգման ցանցը առավելապես կազմված էր տեղական սիստեմի ջրանցքներից, որոնց մեծ մասը գտնվում էր բարձիթող վիճակում։ 1917—1920 թթ. ոռոգվող տարածությունները խիստ կրճատվեցին, 1919 թ. նրանք կազմում էին ընդամենը 60,4 հազ. հեկտար։

Իռիգացիոն շինարարությունը Հայաստանում լայն զարգացում ստացավ խորհրդային կարգերի հաստատումից հետո։ Ոռոգման առաջին խոշոր Լենինի անվան ջրանցքը (Էջմիածնի շրջանում) 2,9 հազար հեկտար ջրովի տարածությամբ, շահագործման հանձնվեց 1923 թ., 1925 թ. շարք մտավ Շիրակի ջրանցքը՝ 10,5 հազ. հեկտար, իսկ 1930 և 1932 թթ. ևս երկու խոշոր ոռոգման սիստեմ՝ Հոկտեմբերյանի ջրանցքը՝ 21,0 հազ. հեկտար և Արտաշատինը՝ 22,0 հազ. հեկտար ջրովի տարածությամբ։ Վերջիններս ջրով ապահովեցին Արտաշատի, Վեդու ու Հոկտեմբերյանի շրջանների կոլտնտեսությունները և սովխոզները, լայն հեռանկարներ բացեցին բամբակագործության, խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության զարգացման համար։

Ջրատնտեսական շինարարությունը Հայաստանում մեծ վերելք ունեցավ ՍՍՀՄ Ժողկոմխորհի և ՀԿ(բ)Կ ԿԿ 1940 թ. «Հայկական ՍՍՀ խաղողի, պտուղների տնկարքների և տեխնիկական կուլտուրաների զարգացման միջոցառումների մասին» որոշումից հետո։ Սկսվեց Թալինի, Ներքին Հրազդանի և մի շարք այլ ջրանցքների կառուցումը։ Ջնայած պատերազմական տարիների ծանր պայմաններին իռիգացիոն շինարարությունը կանգ չառավ, այլ միայն դանդաղեց։

Մինչև Հայրենական պատերազմը ոռոգումը զարգանում էր Արարատյան հարթավայրում, ավելի քիչ Շիրակում, Սևանի ավազանում և այլ գյուղատնտեսական գոտիներում՝ արդեն յուրացված, բնակեցված տերիտորիաներում։ Շինարարական աշխատանքներին ներգրավվում էր կոլտնտեսային գյուղացիությունը։

Հետպատերազմյան շրջանում՝ հատկապես 1950 թ. հետո, ջրատնտեսական շինարարությունը փոխադրվեց հիմնականում Արարատյան գոգավորության նախալեռնային գոտին՝ Աշտարակի, Կոտայքի և Թալինի շրջանները։ Այստեղ ծավալվեցին խոշոր ջրանցքների կառուցման մեծ աշխատանքներ՝ Թալինի (12,0 հազ. հեկտար), Արզնի-Շամիրամի (25,0 հազ. հեկտար) ջրանցքների առաջին հերթերը և Կոտայքի ջրանցքը (5,5 հազ. հեկտար)։ Նոր տեխնիկայի օգտագործման շնորհիվ հնարավոր դարձավ ջրանցքների շինարարության հիմնական աշխատանքները մեքենայացնել։

Վերջին տարիներին Արարատյան գոգավորության նախալեռների դերը, արևից վառված կիսաանապատային հողերը, ցածր արտադրողականություն ունեցող ձմեռային արոտավայրերը ոռոգելու շնորհիվ վերածվում են խաղողի

և պտղատու այգիների, բանջարեղենի, տեխնիկական և այլ կուլտուրաների ցանքատարածությունների։

1965 թ. շարք մտավ Հայաստանի ամենահզոր՝ Նոյեմբերյանի պոմպային կայանը՝ 4,0—4,5 հազ. հեկտար ոռոգվող տարածությամբ։ Ավարտված է Ապարանի ջրամբարի շինարարությունը՝ 7,5 հազ. հեկտար։ Դրա հետևանքով հնարավոր է դառնում համապատասխանաբար կրճատել Սևանա լճից ջրի բաց թողնումը (37 միլ. խոր. մ.)։ Այդ բոլոր ջրատնտեսական աշխատանքների շնորհիվ 1965 թ. հանրապետությունում ջրովի հողերի տարածությունը հասավ 263 հազար հեկտարի։

Ոռոգման ցանցի զարգացումը նպաստում էր Հայաստանի բուսաբուծության հիմնական ճյուղերի՝ խաղողագործության և պտղաբուծության վերելքին, այսինքն այն ճյուղերի, որոնք բնորոշում են հանրապետության գյուղատնտեսության հիմնական մասնագիտացումը։

Հայաստանը կարելի է անվանել խաղողի, ինչպես և ծիրանի և դեղձի այգիների ամենահին օրրանը։ Հայ գյուղացին դարեր ի վեր զբաղվելով այդ կուլտուրաներով, ձեռք է բերել այն մշակելու մեծ փորձառություն ու հմտություն։

Բազմամյա տնկարքների տարածությունը 1913 թ. Հայաստանի ներկա սահմաններում կազմում էր 13,6 հազ. հեկտար, այդ թվում՝ 9,2 հազ. խաղողի և 4,4 հազ. հեկտար պտղատու այգիներ։ 1918—1920 թթ. տնկարքների զգալի մասը փչացավ, մի մասը արմատահանվեց հացահատիկ ցանելու, որոշ մասը կտրատվեց վառելիքի համար։

Խորհրդային իշխանության օրոք այդ ճյուղերը մեծ չափով զարդացան առաջին հնգամյակների ատրիներին և հատկապես վերջին տասնամյակում։ Դա պայմանավորված էր մի կողմից կոլտնտեսությունների ամրապնդումով, հիմնական ֆոնդերի հատկացումների մեծ աճով (որ հնարավորություն տվեց խոշոր կապիտալ ներդրումներ կատարել խաղողի և պտղատու այգիների տնկումների համար), մյուս կողմից պետության խոշոր հատկացումներով՝ խաղողագործական և պտղաբուծական սովխոզներ կառուցելու համար։

Աղյուսակ № 1

Խաղողի և պտղատու այգիների տարածությունների աճը Հայաստանում 1913 թ. մինչև 1965 թ. (հազ. հեկտարներով)

| | 1913 | 1919 | 1928 | 1940 | 1950 | 1955 | 1960 | 1963 | 1964 | 1965 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Խաղողի այգիներ | 9,2 | 5,1 | 8,8 | 16,3 | 19,2 | 19,3 | 30,9 | 36,5 | 36,1 | 36,1 |
| Այդ թվում՝ | | | | | | | | | | |
| կոլտնտեսություններում | — | — | 0,1 | 11,8 | 14,5 | 13,9 | 18,0 | 17,0 | 14,8 | 14,4 |
| սովխոզներում | — | — | 0,4 | 2,2 | 2,5 | 3.2 | 9,9 | 16,5 | 18,3 | 18,7 |
| Պտղատու այգիներ ընդամենը | 4,4 | 1,5 | 4,5 | 15,6 | 18,0 | 21,3 | 24,4 | 31,2 | 33,2 | 36,2 |
| Այդ թվում՝ | | | | | | | | | | |
| կոլտնտեսություններում | — | — | 0,1 | 8,6 | 7,4 | 8,4 | 10,5 | 10,0 | 8,0 | 8,0 |
| սովխոզներում | — | — | 0,2 | 2,1 | 3.3 | 4,4 | 7,4 | 14,7 | 18,8 | 21,7 |

Բազմամյա տնկարքների տարածությունների ընդլայնումը, ինչպես նաև բերքատվության բարձրացումը (շնորհիվ մեքենայացման, պարարտացման, սրսկումների լայն կիրառման և աշխատանքի կազմակերպման բարելավման)

հանգեցրին խաղողի և պտուղների արտադրության ավելացման բարձր տեմպերի։ Արդեն 1962 թ. միայն խաղողի արտադրանքը հասավ 192 հազ. տոննայի, 2,7 անգամ գերազանցելով 1940 թ. մակարդակը։

Խաղողագործությունը, իսկ հարավային ջերմասեր պտուղներ մշակող շրջաններում, մասամբ նաև պտղաբուծությունը ունեն արդյունաբերական նշանակություն։ Արարատյան հարթավայրի խաղողի տնկարքներում գերազանցում են բարձր շաքարայնությամբ խաղողի տեսակները, որոնցից ստանում են թունդ դեսերտային գինիներ։ Հայաստանի հյուսիս-արևմտյան շրջաններում և Կոտայքում մշակվում է խաղող շամպայն, սեղանի գինիներ և կոնյակ արտադրելու համար։ Զանգեզուրում և Եղեգնաձորում նույնպես կան արդյունաբերական խաղողագործության երկու հին օջախներ՝ Արաքս (Մեղրու շրջանում) և Արփա գետերի հովիտները։ Հայաստանում ընդամենը հաշվվում է ավելի քան 100 տեղական և 300 ներմուծված խաղողի տեսակներ ու սորտեր։

Պտղաբուծության պահածոների արդյունաբերական հիմնական հումքային բազան նույնպես Արարատյան հարթավայրն է, որի սովխոզներում և կոլտնտեսություններում կենտրոնացված է ծիրանի և դեղձի բարձրորակ տեսակների արտադրությունը։ Պտղաբուծությունը արդյունաբերական նշանակություն ունի նաև Մեղրու, Նոյեմբերյանի և Եղեգնաձորի շրջաններում։

Խաղողի և պտուղների արտադրանքի և արդյունաբերական հումքի աճը նախապայման հանդիսացան Հայաստանում գինու, կոնյակի և պահածոների արդյունաբերության արագ զարգացման համար։ Խորհրդային իշխանության տարիներին վերակառուցվեցին հին և կառուցվեցին բազմաթիվ նոր խոշոր գինու, կոնյակի ու պահածոների գործարաններ։

Խաղողագործության տարածումը հանրապետությունում սահմանափակված է մի քանի գոտիներով միայն, քանի որ խիստ լեռնային կլիմայական պայմաններում խաղողի մշակումը հնարավոր չէ։ Մինչ հեղափոխությունը պտղաբուծությունը նույնպես տարածված չէր լեռնային շրջաններում։ Միայն վերջին տասնամյակներում, շնորհիվ ցրտադիմացկուն միչուրինյան տեսակների ներդրման, պտղաբուծությունը սկսեց շարժվել դեպի այդ շրջանները։ Ներկայումս այնպիսի բարձրադիր շրջաններում, ինչպիսիք են Ախուրյանը, Բասարգեչարը, Մարտունին, բերքատու պտղատու այգիները զբաղեցնում են հարյուրավոր հեկտար տարածություններ։

Խաղողագործության և պտղաբուծության զարգացմանը նպաստող կարևոր գործոն է խաղողի և պտուղների արտադրության բարձր տնտեսական էֆեկտիվությունը։ Այդ մթերքների գնման գների ավելացումը 1956 թ. զգալի չափով բարձրացրեց նրանց եկամտաբերությունը։ Միաժամանակ բարձրացավ կոլտնտեսությունների և կոլտնտեսականների նյութական շահագրգռվածությունը այդ ճյուղերի զարգացման գործում։ Խաղողի և պտուղների արտադրության շահավետությունը (միասին վերցրած), խաղողագործության համար առավել նպաստավոր 1962 թ. հասավ 115,7 տոկոսի՝ եթե ինքնարժեքը հաշվենք կոլտնտեսականների փաստացի վարձատրության չափով, և 234,6 տոկոսի, եթե այն հաշվենք սովխոզների բանվորների աշխատանքի վարձատրության չափով։

Կոլտնտեսությունների շահագրգռվածությունը, խաղողագործության և պտղագործության զարգացման գործում, պայմանավորված է նաև այդ ճյու-

ղերի արտադրանքի բարձր ապրանքայնությամբ։ 1965 թ. կոլտնտեսություններում այն կազմեց. խաղողինը՝ 81,0 տոկոս, պտուղներինը՝ 86,0 տոկոս։

Վերջապես, անհրաժեշտ է նշել բարձրորակ համային հատկություններով տարբերակվող հայկական գինու, կոնյակի և պահածոների, ինչպես նաև խաղողի՝ սեղանի տեսակների ու կորիզավոր թարմ պտուղների մեծ պահանջը։

Մեծ փոփոխություններ առաջացան հանրապետության դաշտավարության մեջ։ Դրանք կարևոր նշանակություն ունեցան ամբողջ ժողովրդական տնտեսության համար։ Ցանքատարածությունները 1913 թ. մինչև 1965 թ. ավելացան 54 հազար հեկտարով կամ 15,6 տոկոսով և հասան 400 հազ. հեկտարի։ Նշանակալի փոփոխությունների ենթարկվեց ցանքատարածությունների կառուցվածքը։ Մինչև հեղափոխությունը դաշտավարությունը խիստ էքստենսիվ բնույթ ուներ։ Գյուղացիական տնտեսություններում կիրառվում էին պարզ եռադաշտային ցանքաշրջանառություններ՝ հացահատիկի մոնոկուլտուրայով, դյուղում ծանոթ չէին գյուղատնտեսական բարդ տեխնիկային, քիմիացմանը, հողագործության և անասնապահության վարման գիտական մեթոդներին։

Հայաստանի ամբողջ տերիտորիայում, բացառությամբ Արարատյան հարթավայրի, որտեղ զարգացած էր բամբակագործությունը և մշակվում էր բանջարաբոստանային կուլտուրաներ, վարելահողը համարյա լրիվ զբաղեցված էր հացահատիկային կուլտուրաներով և գյուղացիական ցելով։ Շատ հողեր մնում էին խոպան։

1913 թ. 345,7 հազ. հեկտար ընդհանուր ցանքատարածությունից հացահատիկային կուլտուրաները զբաղեցնում էին 308,5 հազ. հեկտար, որը կազմում էր բոլոր ցանքերի 89,2 տոկոսը։ Տեխնիկական կուլտուրաների բաժինը կազմում էր 5,9 տոկոս, կարտոֆիլի ու բանջարա-բոստանային կուլտուրաներինը՝ 3,6 տոկոս և կերային կուլտուրաներինը (գրեթե ամբողջապես ցանովի խոտերը)՝ 1,3 տոկոս։

Հայաստանի դաշտավարության մեջ կառուցվածքային փոփոխություններն առաջացան կարևոր սոցիալ-տնտեսական տեղաշարժերի հետևանքով։ Շնորհիվ խոշոր, լայն մեքենայացման ենթակա տնտեսությունների ստեղծման և խորհրդային պետության օգնության՝ առաջացան բուսաբուծության նոր ճյուղեր, իսկ կուլտուրաների տեղաբաշխման մեջ տեղի ունեցան զգալի փոփոխություններ։ Նոր ճյուղերից առաջին հերթին պետք է նշել ծխախոտագործությունը և շաքարի ճակնդեղը, դաշտային կերարտադրության մեջ՝ սիլոսային կուլտուրաները, կերի արմատապտուղը, միամյա խոտերը։

Նոր տեխնիկական կուլտուրաների՝ ծխախոտի և շաքարի ճակնդեղի ներդրնումը հանրապետության լեռնային և նախալեռնային շրջաններում, մեծ դեր խաղաց նրանց տնտեսական զարգացման գործում։ Շաքարի ճակնդեղի և մանավանդ ծխախոտի մեծ աշխատատարությունը զգալի չափով բարձրացրեց գյուղատնտեսական բնակչության զբաղվածությունը։ Մինչև հեղափոխությունը և մասամբ մինչև գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացումը, Հայաստանի կենտրոնական, հյուսիսային և հարավ-արևմտյան շրջանների բնակչության զգալի մասը, լրիվ զբաղված չլինելով իր անհատական տնտեսության մեջ, աշխատանք գտնելու համար գնում էր Անդրկովկասի մեծ քաղաքները և ինտենսիվ գյուղատնտեսության գոտիները։ Տեխնիկական կուլտուրաների տա-

բածումը գյուղատնտեսության մեջ որոշ չափով օգնեց լուծելու լեռնային և նախալեռնային շրջանների գյուղերում աշխատանքային ռեսուրսների լրիվ օգտագործման հարցը։ Միայն ծխախոտի մշակության համար 1965 թ. կոլտնտեսություններում ծախսված էր 3,6 միլ. մարդ օր, այսինքն՝ բուսաբուծության մեջ ծախսված ամբողջ մարդ օրերի 20 տոկոսը, այն դեպքում, երբ կոլտնտեսությունների ծխախոտի ցանքատարածությունները կազմում էին ընդհանուր ցանքատարածությունների միայն 2,1 տոկոսը։

Ապրանքային նշանակություն ունեցող տեխնիկական կուլտուրաների՝ ծխախոտի, շաքարի ճակնդեղի, խորդենու մշակման արմատավորումը մեծ չափերով ավելացրեց կոլտնտեսությունների դրամական եկամուտները։ Այդ հնարավորություն ստեղծեց բարձրացնել ընդլայնված վերարտադրության տեմպերը գյուղատնտեսության մեջ։ Տեխնիկական կուլտուրաների զարգացումը նպաստեց կոլտնտեսականների կողմից հասարակական տնտեսությունից ստացած եկամուտների ավելացմանը։

Վերջապես, տեխնիկական կուլտուրաների մշակումը մեծ դեր խաղաց հանրապետությունում արդյունաբերության նոր ճյուղեր ստեղծելու գործում։ Բամբակի արտադրության շնորհիվ կառուցվեցին նոր բամբակաղտիչ գործարաններ, առաջացան օճառի, մանող, տրիկոտաժի և թեթև արդյունաբերության մի շարք այլ ճյուղեր։ Շաքարի ճակնդեղի արտադրության բազայի վրա կառուցվեց Սպիտակի շաքարի գործարանը։ Շարք մտան մի քանի ֆերմենտացիոն գործարաններ և Երևանի ծխախոտի ֆաբրիկան։ Հոկտեմբերյանի շրջանում գործում է խորդենու վերամշակման և յուղ ստանալու գործարանը։

Հանրապետությունում մեծ չափով զարգացավ նաև կարտոֆիլի ու բանջարեղենի արտադրությունը։ 1913 թ. Հայաստանում կարտոֆիլի ցանքերը ընդգրկում էին 7,0 հազ. հեկտար տարածություն, բանջարաբոստանային կուլտուրաները՝ 5,5 հազ. հեկտար։ 1965 թ. կարտոֆիլի ցանքերի տարածությունը հասավ 16,8 հազ. հեկտարի։ Լավ բերք ստանալու պայմաններում դա միանգամայն բավական է հանրապետության բնակչության կարիքները այդ կարևոր սննդամթերքով բավարարելու համար։

Բանջարաբուծության զարգացումը մեկ մոտ ընթանում էր երկու ուղղությամբ։ Մի կողմից ստեղծվում էր հումքի բազա՝ պահածոների զարգացող արտադրության համար, որի նշանակությունը աստիճանաբար դուրս էր գալիս հանրապետության սահմաններից։ Լայնացվում էին հարավային, ջերմասեր բանջարեղենի՝ տոմատի, բադրիջանի, պղպեղի ցանքատարածությունները։ Արդյունաբերական բանջարաբուծությունը զարգանում էր գլխավորապես Արարատյան հարթավայրում, որտեղ կառուցվեցին պահածոների երկու խոշոր գործարաններ՝ Երևանում և Հոկտեմբերյանում։

Մյուս կողմից՝ զարգանում էր մերձքաղաքային բանջարաբուծությունը, մեծ քաղաքների բնակչությանը թարմ բանջարեղեն մատակարարելու համար։ Կուսակցության ու կառավարության որոշումների համաձայն, հանրապետության մայրաքաղաք Երևանի և մյուս քաղաքների շուրջ կազմակերպվում են գյուղատնտեսական մերձքաղաքային գոտիներ, ստեղծվում են նոր բանջարաբուծական տնտեսություններ։ Բանջարաբոստանային կուլտուրաների ցանքատարածությունը 1965 թ. հասավ 16,3 հազար հեկտարի և արտադրանքը չորս անգամ գերազանցեց 1940 թվականի մակարդակը։

Գյուղատնտեսական կուլտուրաներից իր ցանքատարածությամբ ներկայումս էլ առաջին տեղն է գրավում հացահատիկը։ Դա բխում է հանրապետության բնակլիմայական պայմաններից։ Հայկական ՍՍՀ-ում վարելահողերի մեծ մասը տեղադրված է ծովի մակերեսից 1500—1600 մետրից բարձր վայրերում, որտեղ անջրդի պայմաններում հնարավոր է մշակել գլխավորապես հացահատիկ և ցանովի խոտեր։ Չնայած դրան, Հայկական ՍՍՀ-ն հացահատիկի արտադրության շատ ցածր ապրանքայնության պատճառով, երբեք չի բավարարել հացի իր պահանջը։ Ներկայումս հանրապետությունում հացահատիկային տնտեսության նշանակությունը սահմանափակվում է գյուղատնտեսական բրնակչության, առաջին հերթին կոլտնտեսականների, պահանջարկով և անասնապահությունը խտացրած կերերով ապահովելու կարիքով։

Սոցիալիստական անասնապահության վերելքի գործում վճռական նշանակություն ուներ դաշտային կերարտադրության կազմակերպումը և զարգացումը։ Ըստ էության, դաշտավարության այդ ճյուղը նոր էր ստեղծվում։ Մինչհեղափոխական շրջանում՝ Արարատյան հարթավայրում բազմամյա խոտերի (4,4 հազ. հեկտար) տարածությունից ստացած արտադրանքը չէր կարող զգալի տեղ գրավել Հայաստանի կերային հաշվեկշռում։

Դաշտային կերարտադրությունը հանրապետությունում սկսեց զարգանալ առաջին կոլտնտեսությունների և սովխոզների կազմակերպման հետ մեկտեղ։ Կերային կուլտուրաների ցանքատարածությունները նշանակալի չափով ավելացան մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը, երբ կոլտնտեսություններում սկսվեցին ներդրվել և կիրառվել խոտադաշտային ցանքաշրջանառություններ։

Սակայն կերային կուլտուրաները առավել մեծ տարածում գտան 1961 թ.։ Նրանց ցանքատարածությունը հասավ 145,1 հազ. հեկտարի, կամ հանրապետության բոլոր ցանքսերի 35,5 տոկոսի, իսկ հացահատիկային կերային կուլտուրաների հետ միասին՝ 53,8 տոկոսի, այսինքն՝ բոլոր ցանքատարածությունների կեսից ավելին։

Իր ուրույն ճանապարհն ուներ Հայաստանի անասնապահության զարգացումը։ Անցյալում նա գրեթե բացառապես հիմնվում էր բնական կերային հողատեսակների՝ մերձալպյան հարուստ արոտների և բնական խոտհարքների վրա։ Անասնապահությունը ուներ գլխավորապես բանվորա-մսա-կաթնային ուղղություն։ Այսպես, մինչհեղափոխական շրջանում, ինչպես նաև մինչև 1929—1930 թթ., անասունների գլխաքանակի կառուցվածքում (վերածած մեծահասակ խոշոր եղջերավոր անասունների) մոտ 30 տոկոսը բանող անասուններն էին՝ եզները և ձիերը։ Անասնապահության մեջ կարևոր դեր էին խաղում խոշոր եղջերավոր անասունները, որոնք ապահովում էին բանող անասունների՝ եզների վերարտադրությունը։ 1916 թ. խոշոր եղջերավոր անասունների տեսակարար կշիռը ընդհանուր գլխաքանակի մեջ (նույն վերահաշվառմամբ) կազմում էր 74 տոկոս։ 1965 թ. նրանց տեսակարար կշիռը իջավ մինչև 63,4 տոկոսի։

Անասնապահության գլխավոր ճյուղի՝ խոշոր եղջերավոր անասունների մեջ տեղի ունեցան մեծ որակական փոփոխություններ։ Մինչև հեղափոխությունը Հայաստանում, բացառությամբ Լոռի-Փամբակի գոտու, չկային ցեղա-

յին անասուններ։ Խորհրդային ժամանակաշրջանում մեծ աշխատանք կատարվեց անասունների ցեղային կազմը լավացնելու ուղղությամբ։

Առ 1-ը հունվարի 1964 թ., խոշոր եղջերավոր անասունների 76 տոկոսը արդեն ցեղային էր, այդ թվում սովխոզներում՝ 80 տոկոսը և կոլտնտեսություններում՝ 74 տոկոսը, կովերինը՝ համապատասխանորեն՝ 74, 83 և 72 տոկոսը։ Խոշոր եղջերավոր անասունների ցեղային կազմի բարելավումը, կերային բազայի նկատելի ամրապնդման և անասունների կերակրման բարելավման հետ միասին, հնարավորություն տվեցին զգալիորեն բարձրացնել կովերի կաթնատվությունը։ Այսպես, միջին հաշվով մեկ կովից տարեկան ստացված կաթը 1940 թ. 591 կիլոգրամից ավելացավ մինչև 1142 կիլոգրամի 1965 թ., այդ թվում սովխոզներում կազմեց 1518 կգ և կոլտնտեսություններում՝ 1382 կգ։

Կովերի կաթնատվության բարձրացման և կաթի արտադրության ավելացման շնորհիվ, նկատելիորեն բարձրացվեց հանրապետության քաղաքների բնակչությանը թարմ կաթնամթերքներով ապահովելու գործը։

Պետք է, սակայն, նշել, որ խոշոր եղջերավոր անասնապահության, ինչպես նաև խոզաբուծության և թռչնաբուծության զարգացման հաջողությունները շատ ավելի մեծ կլինեին, եթե այդ ճյուղերը շահութաբեր լինեին կոլտնտեսությունների համար։ Մինչև 1965 թ. անասնապահական մթերքների նկատմամբ սահմանված վաճառքի գները ցածր էին, նրանք նույնիսկ չէին հատուցում արտադրության վրա կատարած ծախսումները։ Բնական է, որ այդ բացասաբար էր անդրադառնում անասնապահության ընդլայնված վերարտադրության կազմակերպման վրա։

Հայաստանում զգալիորեն զարգացավ ոչխարաբուծությունը։ Այդ ճյուղի համար նպաստավոր ամառային արոտների առկայությունը և արտադրության համեմատաբար լավ եկամտաբերությունը պայմանավորեցին ոչխարների գլխաքանակի մեծ աճը։ 1916 թ. մինչև 1966 թ. ոչխարների գլխաքանակը ավելացավ 80 տոկոսով։ Մինչև հեղափոխությունը Հայաստանում տարածված էին միայն կոշտ բուրդ ունեցող ոչխարներ, ոչխարաբուծության ուղղությունը հիմնականում մսակաթնային էր։ Հանրային անասնապահություն ստեղծելուց հետո ձեռնարկվեցին միջոցառումներ տեղական ոչխարների բրդի որակը բարելավելու, նրանց նրբաբուրդ ոչխարների հետ զուգակցելու միջոցով։ Ներկայումս հանրապետության ոչխարների կազմը, ըստ բրդի տեսակի, բավական խայտաբղետ է։ 1965 թ. արտադրության մեջ նուրբ բրդի բաժինը կազմում էր 32,4 տոկոս, կիսանուրբ՝ 34,4 տոկոս, իսկ կիսակոպիտ և կոպիտ՝ 33,2 տոկոս։

Անհամեմատ մեծ զարգացում ստացավ Հայաստանում խոզաբուծությունը, որը 1913 թ. դեռ սաղմային վիճակում էր։ Գյուղատնտեսության կոլեկտիվացումից և բոլոր տնտեսություններում անասնապահական ապրանքային ֆերմաներ կազմակերպելուց հետո արագ տեմպերով սկսեց ավելանալ խոզերի գլխաքանակը, որը 1961 թ. հասավ 126,1 հազ. գլխի, ութ անգամ գերազանցելով 1916 թ. և ավելի քան երկու անգամ 1950 թ. եղած գլխաքանակը։ Միայն վերջին տարիներին հանրապետության պայմաններում խոզաբուծության զարգացման հնարավորությունների ճիշտ գնահատման հետևանքով, խոզերի գլխաքանակը զգալիորեն կրճատվեց և 1965 թ. կազմեց 81,1 հազ. գլուխ։

Մեծ չափով, հատկապես վերջին տարիներին, նոր թռչնաբուծական ֆաբրիկաներ և ֆերմաներ կազմակերպելու և եղածները ընդլայնելու շնորհիվ, թռչ-

չունների գլխաքանակը՝ 1958 թ. մինչև 1965 թ. գյուղատնտեսության պետական սեկտորում ավելացավ համարյա չորս անգամ։

Հայկական ՍՍՀ-ի բնական պայմանները՝ խիստ արտահայտված ուղղահայաց գոտիականությունը, նպաստեցին ամենուրեք մեղվաբուծության, իսկ ցածրադիր և մի շարք նախալեռնային շրջաններում, որտեղ մշակվում է թթենի՝ շերամապահության զարգացմանը։

Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության տարբեր ճյուղերի զարգացման ամենաբնորոշ ցուցանիշը գյուղատնտեսական մթերքների կարևոր տեսակների արտադրանքի աճն է, որը բերվում է 2-րդ աղյուսակում։

Աղյուսակ № 2

Հիմնական գյուղատնտեսական մթերքների արտադրանքը Հայաստանում 1913, 1940 և 1965 թթ. (հազ. ցենտ.)[3]

| | 1913 | 1940 | 1965 | Տոկոսներով 1913 թ. նկատմամբ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | 1940 | 1965 |
| Հացահատիկ | 1743 | 2228 | 2436 | 127,9 | 139,8 |
| Ծխախոտ | — | 34 | 138 | — | — |
| Շաքարի ճակնդեղ | — | 173 | 1252 | — | — |
| Կարտոֆիլ | 473 | 968 | 1981 | 204,0 | 418,8 |
| Բանջարաբոստանային կուլտուրաներ | 474 | 436 | 2537 | 92,0 | 535,3 |
| Խոտ | 2843 | 4306 | 6129 | 151,5 | 215,6 |
| Խաղող | 585 | 709 | 1421 | 121,2 | 242,8 |
| Պտուղներ | 147 | 300 | 794 | 204,1 | 540,1 |
| Միս (մորթված քաշով) | 192 | 232 | 400 | 120,8 | 208,3 |
| Կաթ | 1290 | 1700 | 3380 | 131,8 | 262,0 |

Հայկական ՍՍՀ գյուղատնտեսությունը արդեն ունի իր բավական պարզ արտահայտված մասնագիտացումը։ Այն համառոտ կարելի է արտահայտել հետևյալ կերպ։ Հայկական ՍՍՀ-ն խաղողագործության, պտղաբուծության և անասնապահության մասնագիտացման շրջան է, զարգացած բանջարաբուծությամբ ու ծխախոտագործությամբ. 1965 թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ խաղողի և պտուղների տեսակարար կշիռը կազմում էր 25,6 տոկոս, անասնապահական մթերքներինը՝ 40,3 տոկոս, բանջարաբոստանային կուլտուրաներինը՝ 14,9 և ծխախոտինը՝ 5,2 տոկոս։

Գյուղատնտեսության արդի մասնագիտացման, արտադրության տեղաբաշխման և ճյուղային կառուցվածքի փոփոխությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայկական ՍՍՀ գյուղատնտեսությունը սովետական իշխանության տարիներին զարգանում էր ճիշտ ուղղությամբ, հանրապետության ժողովրդական տնտեսության շահերին համապատասխան

Առանձին ճյուղերի, հատկապես խաղողագործության ու պտղաբուծության զարգացման բարձր տեմպերը, ապահովեցին գյուղատնտեսության ամբողջ համախառն արտադրանքի մեծ աճը։ Սրրորդ աղյուսակում բերված են Հայաստա-

3 «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.)», 1940 г., стр. 70, 74; Сельское хозяйство Армянской ССР, статистический сборник, 1961, стр. 214, 409; Народное хозяйство Армянской ССР в 1965 г., Статистический ежегодник, 1966, стр. 98, 112, 126.

նում 1913 թ. մինչև 1965 թ. գյուղատնտեսական արտադրանքի ծավալի մեջ եղած փոփոխությունները։

Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության զարգացումը սովետական շրջանում ապրում է անընդհատ վերելքի ուղի։ Սակայն որոշ ժամանակաշրջաններում՝ կոլեկտիվացման, Հայրենական պատերազմի տարիներին հայտնի պատճառներով գյուղատնտեսության զարգացումը կանգ էր առնում, իսկ որոշ ճյուղերում նույնիսկ տեղի էր ունենում արտադրանքի մակարդակի իջեցում։ Գյուղատնտեսության զարգացումը զգալի դանդաղեց նաև անցած յոթնամյակում՝ 1959—1965 թթ.։ ՍՄԿԿ Կենտկոմի մարտյան պլենումը (1965 թ.) բացահայտելով այդ տարիներին գյուղատնտեսության զարգացման տեմպերը դանդաղելու պատճառները, նշեց, որ գյուղատնտեսության ղեկավարման գործում տեղ գտած թերությունների հետևանքով թերագնահատվել են գյուղատնտեսական արտադրանքի կազմակերպման տնտեսական գործոններն ու խթանները։ Գյուղատնտեսության ղեկավարման մեջ սուբյեկտիվիզմը հանգեցրել էր լուրջ սխալների՝ գյուղատնտեսության պլանավորման, ֆինանսավորման, վարկավորման բնագավառներում, գների քաղաքականության ասպարեզում։ Միջոցներ չէին ձեռնարկվում գյուղատնտեսության մեջ աշխատողների նյութական շահագրգռվածությունը բարձրացնելու համար։

Աղյուսակ № 3

Հայաստանի գյուղատնտեսության համախառն արտադրանքը[4]
(1958 թ. համեմատական գներով)

| | Համախառն արտադրանքը միլիոն ռուբ. | | | Տոկոսներով 1913 թ. նկատմամբ | | | Համախառն արտադրանքի կառուցվածքը (տոկոսներով ամբողջ գյուղատնտեսության արտադրանքի նկատմամբ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ամբողջ գյուղատնտեսություն | այդ թվում | | ամբողջ գյուղատնտեսություն | այդ թվում | | | |
| | | բուսաբուծություն | անասնապահություն | | բուսաբուծություն | անասնապահություն | բուսաբուծություն | անասնապահություն |
| 1913 թ. | 73 | 37 | 36 | 100,0 | 100,0 | 100,0 | 56,7 | 49,3 |
| 1940 թ. | 146 | 92 | 54 | 200,0 | 248,6 | 150,0 | 63,0 | 37,0 |
| 1950 թ. | 169 | 112 | 57 | 231,5 | 302,7 | 158,2 | 66,3 | 33,7 |
| 1958 թ. | 249 | 133 | 116 | 341,1 | 359,[illegible] | 322,2 | 53,4 | 46,6 |
| 1965 թ. | 307 | 183 | 124 | 420,5 | 494,6 | 344,4 | 59,6 | 40,4 |

Այդպիսի դրություն տեղի ուներ նաև Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության մեջ. 1965 թ. մեկ աշխատավորին ընկնում էր 1,7 հազ. ռուբլու հիմնական արտադրական ֆոնդեր։ Այդ նշանակում է, որ հանրապետության գյուղատնտեսության մեջ շատ ցածր էր ֆոնդազինվածությունը։ Հիմնական ֆոնդերի ոչ բավարար կառուցվածքի, ոչ ճիշտ լրիվ օգտագործման պատճառով ցածր էր նույնպես ֆոնդահատույցը։ Այսպես, 1960—1965 թթ. կոլտնտեսություններում հիմնական ֆոնդերը ավելացել են 44 տոկոսով, իսկ համախառն արտադրանքը միայն 10 տոկոսով։

[4] «Сельское хозяйство Армянской ССР», 1961, стр. 12; Народное хозяйство Армянской ССР в 1965 г. Статистический ежегодник, стр. 69.

Կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության բարձրացման հիմնական պայմանը՝ աշխատանքի արտադրողականության հետ միատեղ աշխատանքի վարձատրության ավելացումն է։ Սակայն Հայկական ՍՍՀ կոլտնտեսություններում 1959—1960 թթ. խախտվեց աշխատավորներին հասարակական տնտեսության վերելքով նյութապես շահագրգռելու այդ սկզբունքը։ 1959 թ. աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ կոլտնտեսություններում 13,2 տոկոսով, մինչդեռ մեկ մարդ-օրվա աշխատավարձը կրճատվեց 2,5 տոկոսով։ Գրեթե նույնը կրկնվեց 1960 թ.։

1965 թ. մարտյան պլենումը և ապա ՍՄԿԿ XXIII համագումարը նշագծեցին գյուղատնտեսության հետամնացությունը վերացնելու գլխավոր ուղիները։ Համագումարը ընդգծեց, որ գյուղատնտեսության հետագա զարգացման հիմնական խնդիրն է հողագործության և անասնապահության մթերքների արտադրության ավելացումը՝ բնակչության աճող պահանջները սննդամթերքներով և արդյունաբերության պահանջը գյուղատնտեսական հումքով ավելի լավ բավարարելու համար։

Միութենական ժողովրդատնտեսական նշանակություն ունեցող այդ խոշոր հարցերի հետ մեկտեղ, գոյություն ունեն առանձին տնտեսական շրջանների, հանրապետությունների, տեղական բնա-տնտեսական պայմաններից բխող, գյուղատնտեսության զարգացման իրենց խնդիրները։ Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության հեռանկարային զարգացման հիմնական խնդիրներն են. 1. ունենալ տնտեսապես առավել նպատակահարմար մասնակցություն համամիութենական աշխատանքի հասարակական բաժանման մեջ, հնարավորին չափ լրիվ օգտագործելով տեղական բնակլիմայական ու տնտեսական պայմանները. 2. ապահովել ա) հանրապետության գյուղատնտեսության մասնագիտացման ամենահիմնական ճյուղերի՝ խաղողագործության ու պտղաբուծության հետագա արագ զարգացումը, բ) Երևան քաղաքի և ուրիշ արդյունաբերական կենտրոնների մերձքաղաքային գոտիների մասնագիտացման խորացումը արդեն մոտակա տարիներին բնակչության պահանջարկը մերձքաղաքային գյուղատնտեսության մթերքներով (բանջարեղեն, թարմ կաթնամթերքներ, ձու և այլն) լրիվ բավարարելու համար։

Հիմնականում այդ խնդիրներն էին դրված հանրապետության կոլտնտեսությունների, սովխոզների և պլանավորվող օրգանների առաջ գյուղատնտեսության զարգացման հնգամյա (1966—1970 թթ.) պլանը կազմելու ժամանակ։

Հնգամյակում, ՍՄԿԿ ԿԿ մայիսյան (1966 թ.) պլենումի որոշման համաձայն, համեմատած նախորդ ժամանակաշրջանների հետ, ավելի մեծ թափ են ստանալու ջրաշինարարական աշխատանքները։ Հայկական ՍՍՀ ոռոգելի տարածությունը ավելանալու է ավելի քան 50 հազ. հեկտարով։ Քանի որ նոր ոռոգելի հողերի զգալի մասը գտնվում է նախալեռնային և մասամբ Արարատյան հարթավայրի շրջաններում, ապա նպատակահարմար է գտնված նրանց նշանակալի մասը՝ 20,0 հազ. հեկտար տրամադրել խաղողի և պտղատու այգիներ տնկելու համար։ Միևնույն ժամանակ հաշվի է առնված ժողովրդական տնտեսության ուրիշ կարևոր պահանջներ՝ մասնավորապես բանջարաբուծության, որոշ տեխնիկական կուլտուրաների (խորդենի) զարգացման անհրաժեշտությունը և անասնապահության զարգացման համար կերային կուլտուրաների ցանքատարածությունների ավելացումը։

Ոռոգման ցանցի զարգացման և գյուղատնտեսության նյութա-տեխնիկական բազայի ամրապնդման շնորհիվ Հայաստանում կապահովվի գյուղատնտեսական մթերքների արտադրության մեծ աճ։ 1965 թ. մինչև 1970 թ. խաղողի արտադրությունը կավելանա 84 տոկոսով, պտուղներինը՝ 65 տոկոսով, բոլոր կերային կուլտուրաներինը՝ մոտ 60 տոկոսով, բանջարեղենինը՝ 57 տոկոսով, խորդենունը՝ ավելի քան երեք անգամ, թռչնաբուծության մթերքներինը՝ 71 տոկոսով, կովի կաթինը՝ 28 տոկոսով։

Առանձին մթերքների արտադրության նախատեսված աճը հնգամյակում կապահովի ամբողջ գյուղատնտեսական արտադրանքի ավելացման անհամեմատ ավելի բարձր տեմպեր, քան նախատեսված է Միության համար։ 1966—1970 թթ. ՍՍՀՄ-ում գյուղատնտեսության միջին տարեկան արտադրանքը, 1961—1965 թթ. միջին տարեկան արտադրանքի համեմատությամբ, պետք է ավելանա 25 տոկոսով, իսկ Հայկական ՍՍՀ-ում 40 տոկոսով։ Գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճի տարեկան տեմպերը կհասնեն 7 տոկոսի, յոթնամյակում ունեցած 3 տոկոսի դիմաց։

Ինչպիսին պետք է լինեն Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության ավելի հեռավոր հեռանկարային զարգացման ուղիները։ Ակնհայտ է, որ դրանք պետք է հնգամյա պլանի հետևողական զարգացումը, գյուղատնտեսության մասնագիտացման խորացումը և արտադրական կառուցվածքի կատարելագործումը լինեն։ Եթե ներկա հնգամյակում գյուղատնտեսության վերելքի շատ կարևոր հարցեր դեռ չեն կարող լրիվ լուծում ստանալ՝ հաշվի առնելով ժամանակի սղությունը և երկրի նյութատեխնիկական միջոցների սահմանափակ լինելը, ապա հետագայում (1980 թ. մոտ), պետք է լիովին իրագործվի այն գլխավոր խնդիրը, որը կանգնած է երկրի և մեր հանրապետության գյուղատնտեսության առաջ. հասնել գյուղատնտեսության մթերքների արտադրության այն բարձր մակարդակին, որը լրիվ ապահովի բնակչության և ամբողջ ժողովրդական տնտեսության աճող պահանջները։